

УДК 551.432

РЕФЕРАТ

Տ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՉԵՎԱԶԱՓԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԻԿԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ, ՆՈՐԱԳՈՒՅՆ  
ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՎ ՄՈՐՖՈՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՆԵՐ ՎԵՐ  
ՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Ռելիեֆի բազմաթիվ ձևերն իրենց ծագումով սերտորեն կապված են նորագույն տեկտոնական շարժումների և երկրաբանական կառուցվածքների հետ: Այդ կապը բացահայտելու գործում կարևոր նշանակություն ունի նաև ձևաչափական (մորֆոմետրիական) մեթոդի կիրառումը: Այդ նպատակով մեր կողմից ձևաչափական վերլուծության ենթարկվեց Գետիկի ավազանի բարդ, ծալքաբեկորային ռելիեֆը, որը հնարավորություն տվեց ավազանում անջատելու մի շարք մորֆոստրուկտուրաներ տեկտոնական շարժումների տարբեր նշաններով: Մորֆոստրուկտուրաներից մի քանիսը համընկնում են երկրաբանական կառուցվածքի հետ, որոնք վեր են հանվել երկրաբանական և գեոմորֆոլոգիական տվյալներով, իսկ մի մասը բացահայտվում են առաջին անգամ: Ընդհանուր առմամբ Գետիկի ավազանի վերին և միջին մասերը նեոգենում իրենցից ներկայացրել են միջլեռնային մի գոգավորություն, Արեգունու և Միափորի լեռնաշղթաների միջև, որը հետագայում վերակառուցվել է և բարդեցվել տեկտոնական խզման գծերով պայմանավորված դիֆերենցված շարժումներով:

Ձևաչափական վերլուծության հիման վրա այստեղ հնարավոր է անջատել Միափորի միաթեք բարձրացումը ռելիեֆի շրջված տիպով (կատարային մասում), Կիրկիտ-դադի և Սոյուխ-բուլադի անտիկլինային դմբեթաձև բարձրացումները, Քաշաթաղի և Գոշի անտիկլինային ինտենսիվ բարձրացումները, Կրասնոսելսկի և Ստորին Գետիկի սինկլինալային կառուցվածքի հարաբերական իջեցումները, Փոլադի և Բարիբերի հարաբերական իջեցումները ռելիեֆի շրջված տիպով:

Միափորի միաթեք բարձրացումը հարևան Կրասնոսելսկի սինկլինալ գոգավորությունից անջատվում է մի լայնակի խոշոր վերնետվածքով, որին տարբեր անկյունների տակ հատում են մի շարք տեկտոնական խզման գծեր, բեկորահատելով Միափորի և Արեգունու լեռնաշղթաները: Նրանցով անջատված բեկորները ենթարկվել են դիֆերենցված տեկտոնական շարժումների: Արեգունու լեռնաշղթան Ջան-Թափա լեռնազանգվածից մինչև Քաշաթաղ ունի ռելիեֆի ուղիղ տիպ, անտիկլինալի առանցքը անցնում է լեռնաշղթայի կատարային մասով: Գենետիկորեն այլ կառուցվածք ունի լեռնաշղթայի արևմտյան մասը, որը բնութագրվում է ռելիեֆի շրջված տիպով, վերակառուցված Փոլադ և Բարիբեր գետերի վերին ավազանում նախկինում գոյություն ունեցող մի ընդարձակ սինկլինալային ճկվածքից: Վերջինս ընդգրկում էր նաև Դրախտիկ (Թոխլուջա) գետի վերին ավազանը, հասնելով մինչև Արտանիշի լճախորշը: Այս իջվածքի առանցքային յասի մորֆոմետրիական առանձնահատկությունները



որոշակիորեն ցույց են տալիս մի խոշոր խզվածքի (վերնետվածքային բնույթի) առկայությունը: Ավելի ուշ իջվածքը դադարում է գոյություն ունենալուց Սոյուխ-բուլաղի և Կիրակիտ-դաղի գմբեթաձև բարձրացումների հետևանքով: Ըրկրակեղևի բարձրացման հետ զուգընթաց, Փոլաղ և Բարիբեր գետերի ստորին հոսանքների շրջանում տեղի է ունենում գետերի «հալիշտակում» Գետիկի կողմից:

Գ. Ս. Անանևի կողմից առաջարկված բարձրացման ամպլիտուդայի մեծությունը որոշող բանաձևով հաշվել ենք Գետիկի ենթաավազանի բարձրացման ամպլիտուդան և քարտեզագրել այն: Գետիկի ավազանում առավել բարձրացման է ենթարկվել Միափորի լեռնաշղթայի կենտրոնական և արևմտյան մասերը (2000 մ և ավել), Փոլաղ գետի ավազանը (1500—2000 մ), Արեգունու լեռնաշղթան (1000—1500 մ), իսկ բարձրացման համեմատաբար փոքր ամպլիտուդաներ ունեն Կրասնոսելսկի գոգավորությունը (500 մ), Բարեբեր գետի ավազանը (500—1000 մ) և այլն:

А. Т. МИКАЕЛЯН

## К ХАРАКТЕРИСТИКЕ ВУЛКАНИЧЕСКИХ ШЛАКОВ КАК ПОРИСТЫХ ЗАПОЛНИТЕЛЕЙ В СВЯЗИ С ИХ ПЕТРОГРАФИЧЕСКИМИ ОСОБЕННОСТЯМИ

Вулканические шлаки встречаются в трех петрографических составах: близкие к базальтам андезито-базальтовые, андезито-базальтовые и андезитовые.

Одной из характерных петрографических особенностей шлаков, определяющей их физико-механические свойства, являются текстурные различия обломков и их распределения в зависимости от петрографического состава. В шлаковых постройках, близких к базальтам андезито-базальтового состава, преобладающее распространение имеют обломки шлаковой (шлако-пористой) и мелкопористой (базальтового типа) текстуры; в андезито-базальтовых—обломки крупнопористой (средне-крупнопористой) и среднепористой текстуры; в андезитовых—обломки волокнисто-пористой (волокнисто-шлаковой) и мелкопористой (андезитового типа).

Средние значения объемных весов обломков—образцов по текстурным признакам колеблются в интервале от 0,68 до 1,13 г/см<sup>3</sup>; наименьшие значения имеют обломки крупнопористой и волокнистопористой текстуры.

Наибольшие средние значения общей пористости (оно колеблется от 56,6 до 74,3%) отмечаются у обломков крупнопористой текстуры, наименьшие—у обломков шлаковой текстуры и агглютинатов.

Наименьшую изменчивость общей пористости показывают обломки крупнопористой текстуры (она колеблется от 4,1 до 14,2%).

С увеличением кислотности шлаков средние значения насыпных